Հավելված N11
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.8-Մ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Մ.Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների պետական քաղաքականության մշակմանը.

2. մասնակցում է չափագիտության, ստանդարտացման, հավատարմագրման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքներ.

3. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության խորացման աշխատանքներ.

4. մասնակցում է տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման բնագավառներում միջազգային համագործակցության, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի համադրության աշխատանքների կազմակերպման և իրականացման աշխատանքներին.

5. մասնակցում է Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների ոլորտի օրենսդրությունների ուսումնասիրության, առկա տարբերությունների բացահայտման աշխատանքներին.

6. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ), Եվրամիության (այսուհետ՝ ԵՄ), ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քննարկման աշխատանքներին, կազմակերպում է համապատասխան քննարկումներ, տեսակոնֆերանսներ՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ.

7. մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների զարգացման համար կանխատեսելի նորմատիվ-իրավական դաշտի ձևավորման և արդյունավետ ընթացակարգերի ներդրման աշխատանքներին.

8. մասնակցում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացին.
9. մասնակցում է արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող ռեֆերենս լաբորատորիաների ճանաչման գործընթացին.
10. մասնակցում է ՀՀ-ում հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների էլեկտրոնային համակարգերի մշակման և ներդրման աշխատանքներին.
11. մասնակցում է ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքներին.
12. մասնակցում է համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձաքննությունների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքներին.

Իրավունքները՝

- պահանջել ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներում իրականացվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակման հետ կապված փաստաթղթեր և հիմնավորումներ.
- պահանջել տեղեկատվություն տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման բնագավառներին առնչվող իրավական ակտերի նախագծերի, գրությունների, առաջարկություններ, եզրակացությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, ուղեցույցերի և այլ փաստաթղթեր նախապատրաստման, պետական քաղաքականության իրականացման օրենսդրական ակտերի նախագծերի մշակման հետ կապված.
- կազմակերպել քննարկումներ մասնագիտական կարծիքներ ստանալու նպատակով
- կազմակերպել ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտներին առնչվող սպառողների շահերի իրավունքների պաշտպանության հարցերով քննարկումներ և ժողովներ.
- կազմակերպել քննարկումներ մասնագիտական կարծիքներ ստանալու նպատակով.
- կազմակերպել սպառողների շահերի իրավունքների պաշտպանության հարցերով քննարկումներին և ժողովներ.
- մասնակցել հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ հավատարմագրման ազգային մարմնի անդամակցությանը, դրանց միջև համագործակցությանն ու գործունեությանն ուղղված աշխատանքներին:

Պարտականությունները՝

- նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների միջազգային ինտեգրման աշխատանքներն իրականացնելու համար.
- ազգային որակի ենթակառուցվածքների բաղկացուցիչ մաս հանդիսացող ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովման և գոյություն ունեցող համակարգի բարեփոխման աշխատանքների իրականացման նպատակով ներկայացված առաջարկությունների ամփոփում.
- նախապատրաստական աշխատանքներ կատարել կազմակերպելու համար պետություն-մասնավոր հատված երկխոսության և վերլուծությունների հիման վրա ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ոլորտների զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտման և ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով.
- նախապատրաստական աշխատանքներ կատարել համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացին առնչվող աշխատանքների համար.
- նախապատրաստական աշխատանքներ կատարել հավատարմագրման գործընթացի մատչելիության, թափանցիկության ապահովման, հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների արդյունավետության բարձրացման և վերահսկելիության ապահովման հարցերի հետ կապված քննարկումներ կազմակերպելու համար:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: